

Գ Ա Յ Յ Ր Ե Ն Ի Ք

15
Փարա

Օ Ր Ա Թ Ե Ր Թ

15
Փարա

Հայրենիք ամեն օր կը նրատարակուի, ամբողջ գինն է Գոյսոյ և գաւառաց համար 7 արծար մեծիտ կամիսիկ : գաւառացիք քարտարարեան ծախքը մեր վրայ է : վեցամսեայ և եռամսեայ բաժանորդք ալ կը ներգրանուին :

Լրագրոյս վերաբերեալ գիր կամ նամակ պէտք ունեցողի առ Տէր-Խմբով գիր թիզա փազա խամ Թ. 14 : Խմբագրութեան ազդեալ գիր եւ չքարտիր : Ծանուցման առջ մեկ անգամի համար 3 դրու է : անկի առ գամի համար սակարկութեան կը լլայ :

Ա Ղ Գ Ա Յ Ի Ն

ԻՄ ՄՏԱՍՈՒԹԻՒՆԻՔ

Խ Ր Ա Ն Ո Յ Ս

Ոմանք աղնուախոհք կարդալով զգածուեր են մեր « Լքեալ հանճար »-էն և մանաւանդ նորա ենթակայի վիճակէն : Մեր անգորդ տողեր չենք կարծեր որ յաղողած ըլլան դժբաղդ կէտերեանի վիճակն իսկապէս բացատրելու, պարագայներ կան յորս մարդկային լեզուներ և մանաւանդ մեզ պէս ազիկար գրիչներ անկարող կը ըլլան որոսով զբացածնին գրչով բացատրելու :

Կէտերեան պատուելի համար խօսելով կը տեսնուի թէ հետաքրքիր ազգայինք այդ լքեալ հանճարին արժէքը գիտնալու գնահատելու համար հետը տեսնուելու են, կարդալու են սրտին խորը գտնուած ընդարձակ մտտեանն որ արեւմտեան գրուած է և թշուառութեան գիծերով գծուած : Պիտի տեսնեն թէ հանճար մը թէն ըլլայ այդ մարմնաւոր աչէ զուրկ, բայց հոգւոյ աչաց զօրութեամբ և ինքնաշխատութեան շնորհիւ կրնայ հիանալի կերպիւ զարգանալ և փայլիլ :

Կէտերեան պատուելի հիանալի կողմը այն է որ հնգամսեայ հասակին մէջ կորուսած է իւր աչաց լոյս և նման այն ծաղիկն որ առտուն կը բացուի իւրիկուան կը թռնուի, այսպէս և Թադէս պատուելի կենաց մթնշաղի մէջ աչքը բացեր և արշալոյսին փակեր է :

Հէք հայրն իւր որդւոյն սոյն աղէտէն դառնապէս մորմաքեալ գիշեր մը երազին մէջ կը տեսնէ անգորդ ծերունի մը որ մխիթարել եկած էր, ո՞վ մարդ բաւէ զու մորմաք, զու որդւոյն մարմնաւոր աչքը առնողը հոգեկան աչք մը կը պարգևէ նմա որ զայն կը գերազանցէ յոյժ յոյժ :

Եւ արդարեւ այդ երազն իրականացաւ :

Նախախնամութիւնն այնպիսի շնորհք մը պարգևեց մանուկ կէտերեանի որ ոչ միայն ընտանեաց այլ բովանդակ Մեքատիոյ այլ ազգին պատիւ կը բերէ և օտարաց առջև մեր ժողովրդեան աշխատասիրութեան ինքնօգնութեան և հանճարոյն գրուածներ կը բօլորէ :

Բայց այս ամենը տրամին միայն մէկ կողմն է, դարձնենք միւս կողմն ալ և պիտի տեսնենք թէ շատ ախուր շատ անմխիթարական է :

Իրօղութիւնն այն է որ կէտերեան Թադէսու պատուելի վիճակը բաւին բովանդակ նշանակութեամբ թշուառ է, իւր գլխաւոր թշուառութեան և մտաւոր թշուառութեան պատճառն այն է որ 18 ամեայ միամոր զուակն որ ուսեալ պատանի մէ, դժբաղդ աչազուրկին աչքն է, ոտքն է, ձեռքն է, մեքենայն է, պահպան հրեշտակն է և որ մի վայրկեան չէ կարող հեռանալ իւր հօրը քովէն, հլու, հնազանդ, խելօք տղայ մը որ իւր հօր կը ծառայէ յամենայնի, կէտերեան նորա միջոցաւ կը կարգայ նորա միջոցաւ կը քայլէ, կուտէ, կը խմէ, կը պահէ, կը լիւնէ :

Թադէսու պատուելի աչքէ զուրկ ըլլալուն համար եթէ ազգը կը ներէ թող յաւէտ թշուառ ըլլայ, թէն քաղաքակրթեալ ազգաց մէջ ի տես դնելու ընտիր աւարկայ մ'է որ ընտիր հայերէն գիտէ և կը գրէ, գիտէ ֆրանսերէն, թուրքերէն, պարսկերէն, գիտէ երաժշտութիւն և ընտիր կերպով վին կածէ, բայց ազգն ինչ պիտի ըսէ, միթէ իւր որդին և ոչ առաջարտուած է յաւէտ թշուառ ըլլալ, այն միակ յանցանքով որ իւր աչազուրկ հօր արժանապէս ծառայած է, ահա այս կէտն է ընդ որ կը ցուի և կը խշխշայ միշտ պատուելիին սիրտը. ահա այս կէտն է որոյ վրայ կը հրաւիրեմք մեր ձեռնհաս ազգայնաց ուշադրութիւն :

Ըսինք թէ կէտերեան պատուելի թշուառ է, զի գործ կուզէ և անգործ է, կամայէ նա մօլորանալ, պատու մը հաց, պուտ մը ջուր, խորխուր սենեակ մը, ահա այս է իւր սուգածը որպէս զի աշխատի և ապրի և օգտակար ըլլայ ազգին :

Աղնուախորտ անկին մը անցեալ օր կը տեսնուի — Իցիւ թէ միջոցներս ներէին տես ինչ կընէի —, վատն էի տիկնօջ բարեօրութեան, բայց ես յարեցի իմ կողմէ հեռուեալ ընտիր առածն,

— Որ ոչ կարէ որպէս կամի, կամեցի որպէս կարէ — այսինքն օվ որ ուղածին պէս չի կրնար, գոնէ կը ցածին պէս կամենալու և գործադրելու է :

Ինչպէս որ ասկից առաջ այս էլերուն

մէջ յանձնարարած էինք, նոյնպէս և այս անգամ ամեն զգացող որտեղու կը դիմենք և առիպողապէս կը խնդրեմք որ կէտերեանի գիրքէն՝ Թեոֆիլի Առակներէն մէկ մի օրինակ գնելով ապրեցնեն և խրախուսեն լքեալ հանճարը :

Եւ մանաւանդ Մեքատիոյ կէտերեան կան երեսփոխան Մեծարգոյ Մկրտիչ Մելիքեան իմ սիրելի բարեկամէն կը խնդրեմ և կը պահանջեմ որ իւր երեսփոխանը գտնուած գաւառին մեր սիրելի Մեքատիոյ ժողովրդեան ջերմապէս և ազգուապէս հրաւէր կարգայ բովանդակ ազգին և մասնաւորապէս իրենց պատիւ բերող սոյն պատուելիին թեւէն բանելու և իւր աշխատութիւնը գեղեցիկու համար, ըսինք, մասնաւորապէս սերտացուց, զի ամեն բանէ աւելի կէտերեան պատուելի տան և ութ տարիներ վարժապետութիւն ըրած է Ս. Նշանայ վանքին մէջ և երկրին արդիւնքներ մատուցած որ իւր տեսակին մէջ հիանալի է արդարեւ, ըստ այսմ կէտերեան իրաւունք ստացած է մեր սիրելի սերտացուց երախտագիտութեան վրայ :

Խ. Յ. Ս.

Խմբագրութեան Տէր Հայրենիք պատուական լրագրոյ,

«Տեսեալ խորհուրդը լսել է թէ Ազգ. Մատենադարանը անխնամ մնացած է, ուստի այդ մասին քննութիւն մը կատարել որոշեր է, և այլն» :

Այսպէս հրատարակուած տեսայ մէկ քանի լրագրաց մէջ, որով պարտաւորացայ հակառակ իմ ծանր զբաղմանցս, հետեւեալ համառօտ բացատրութիւններն հրատարակել :

Ազգ. Մատենադարանը Ազգ. Վարչութեան վաւերացեալ մասնաւոր ընկերութեան մը կողմանէ հաստատուած է, այն ընկերութեան մէջ կան իբրև մշտնջենաւոր անդամ մէկ քանի Պատրիարքներ, եպիսկոպոսներ և այլ եկեղեցական ու աշխարհական երևելի ազգայիններ, մէկ երկու հազար օրինակ գիրք և ձեռագիրք, քիչ մ'ալ հին դրամներ ևն. հաւաքուած և կանոնաւոր դարաններու մէջ խիտ աղէկ խնամուած են : Մատենադարանը կը բացուի որոշեալ օրէն զատ (հինգշաբթի) երբ որ մասնաւորապէս խնդրուելու ըլլայ, ամեն նախապատուութիւնը կընդունուին և օրինաւորապէս

կարձանագրուին իրենց յատուկ տուժա-
րին մէջ :

Դժբաղդաբար Ազգ. Վարչութիւնը
ցարդ և ոչ մէկ կերպով օգնած է այս
կարևոր հաստատութեան, ընդ հակա-
առակը շատ անգամ դժուարութիւններ
ալ յարուցեր է անոր ընթացքին առջև,
զորս թուել արեւորդ կը համարիմ :

Արդի Պատ. Տնտես. խորհուրդը ինչ
դիտաւորութիւն ունի չեմ գիտեր, բայց
սա կը տեսնուի որ օգուտ մ'ընելէ ա-
ռաջ՝ այդպիսի հրատարակութիւններ ը-
նելով զիստ հասուցած կը համարուի
Մատենադարանի յառաջադիմութեանը :

Տնտես. խորհուրդի պատուարժան ան-
դամները անձնագէտ ճանչնալու, վտան-
հա թէ մասնաւոր դիտում մը չունին,
վասն որոյ կը խնդրեմ իրենցմէ որ եթէ
երբէք բարիք մ'ընել կուզեն, նախ ու-
րիշներու օրինակ ըլլալու համար իրենք
մէկ մէկ գիրք կամ այլ նուէր տալու
բարեհաճին, և յետոյ իրենց պաշտօնին
բնութեամբ և իրենց պարտականու-
թեան համեմատ աշխատին որ Ազգ. Ժո-
ղովէն քուէտրկեալ գումարն՝ ամսական
երեք ասկի, սկսուի վճարուի Մատենա-
դարանին, ինչպէս և դիզուած ամսա-
կաններն : Այն ատեն պէտք եղած աշ-
խատանք ու հրատարակութիւնը ըլլալով
կարելի կըլլայ կատարեալ տեղեկութիւն
տալ Ազգին և ճանչնել կարևորութիւնն
Ազգ. Մատենադարանի, առանց որոյ
ազգ. մը վայրենի կը համարուի :

Մնամ Զեզ . . . խմբագրապետ ամե-
նայն յարգանքով Հիմնադիր-Տնօրէն
Ազգ. Մատենադարանի
Յ. Արշակունի

7 մարտ 1883

Ուսումն. խորհուրդի Ժ. Բ. նիստն տեղի
ունեցաւ երէկ ի Ղալաթիս :

Խորհուրդը նիկոսիդիոյ, Դարակէօմ-
րիւկի, Միջագիւղի, Պօլուի, Այլթապի
օրհանօցին և վարչանեան նախակրթա-
րանին, Կեսարիոյ էվէրէկ և Ֆէնէպէ
գիւղերու, Տիգրանակերտի, Սալմաթօմ-
ուրի կրթական ընթացիկ գործերով և
պաշտօն խնդրող դաստասաց խնդրով
զբաղելէ և ինչ ինչ տնօրինութիւններ ը-
նելէ յետոյ խորհուրդակցութիւն մ'ունե-
ցաւ դաւաառաց մէջ կրթական այցելու
տեսուչներ յղելու հարկին վրայ, որոշեց
իւր ծրագրած վարժապետօցին մէջ
կիրականօրեայ մանկավարժական դասա-
խօսութիւններ հաստատել յօգուտ այն
ազգային դաստիարակաց՝ որք պէտք ու-
նին իրենց մասնագիտութիւնը զարգա-
ցնելու, և դաստիարակութեան պիւտ-
ճէի խնդրոյն վրայ երկար խորհրդակ-
ցութիւն մ'ընելէ յետոյ որոշեց առ Ազգ.
Ժողովն ներկայանալի օրինաց ծրագիր
մը պատրաստել այս մասին՝ իւր յառա-
ջիկայ նստին մէջ :

Իմացանք որ Մամլոյ խմբագիր Այվազ-
եան Գեորգ էֆէնտի Ոստիկանութեան
բանտէն Մէտաէրհանէ փոխադրուեր է :

Նիկոսիդիոյ Գեր. Առաջնորդը Պար-

տիզակի Թադ. խորհուրդի խնդրանք յիշ-
եալ գիւղին երեք քահանայ ձեռնադրե-
լու համար մայրաքաղաքիս եպիսկոպոս-
ներէն միայ յանձնարարութիւն ընել
խնդրեր է Ս. Պատրիարքէն :

Էջմիածնի ներկայ վիճակին վրայ ըն-
դարձակ տեղեկութիւններ հասած ըլլա-
լով մեզ, վաղը պիտի հրատարակեմք :

Ազգային Ժողովը նիստ ունի յառա-
ջիկայ ուրբաթ, 11 Մարտ ի Ս. Լուսա-
ւորիչ եկեղեցի Ղալաթիոյ :

Ատենը պիտի բացուի Ժամ 7 1/2 ին :
Հրակիրեալ են Ազգ. Երեսփոխանք ի-
րենց ազգասիրական պարտականութիւնը
կատարելու փութալ :

Մնամ աղօթարար
Պատրիարք Կ. Պօլսոյ
ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ
8 մարտ 1883

Օ Ր Ա Ա Ր Գ

Վիճաբանութիւն ի վերայ վարչական
գրութեան :

Ն Ե Ր Ք Ի Ն

Արտաքին գործոց նախարար Վսեմ.
Ատրիֆի փաշա առողջանալով, Բ. Դու-
աը իւր պաշտօնին գլուխն անցաւ :

— Զօրապետ Վսեմ փաշա Վեհ. Սուլ-
թանին ներկայանալով, իւր երախտագի-
տութիւնը յայտնեց է կայսերական շնոր-
հաց համար որ վերջին օրերս «Լիվա» ի
աստիճան բարձրացուց զինքը :

— Վեհ. Սուլթանին մասնաւոր բը-
ժիշկ Պ. Զօկրօֆօս շքաթ օր մայրա-
քաղաքս վերադարձաւ, կայսերական
պալատան օպոյներէն մին եւսթի նա-
ւակաւ մը բժիշկը դիմաւորեց և շօքե-
նուէն ցամաք հանեց :

— Մայրաքաղաքի Ծուէտ-Նորվէկիոյ
դեպարտաման քարտուղար Պ. Հէյտէնս-
թամ Եգիպտոսի Ծուէտ-Նորվէկիոյ գոր-
ծակատար և ընդհանուր հիւպատոս ան-
ուանեցաւ :

— Բ. Դուաը մայրաքաղաքիս դեսպա-
նաց շրջաբերական մը զրկելով ծանու-
ցեր է թէ Պետական խորհուրդի առա-
ջարկութեամբ օտար երկիրներէ մայրա-
քաղաքս զրկուած վիճակահանութեանց
տոմսերու շրջաբերութիւնն արգելուած
է :

— Երկուշաբթի օր Ֆէնէր Միխալ ա-
նուն պարտիզպան մը մեռնելով, մար-
մինը տունէն եկեղեցի տարուելու տուն
տանը օանդուրը բազմութեան ծանու-
թեանէն փրկու և քանի մը հոգի ծանրա-
պէս վիրաւորուելով հիւանդանոց տար-
ուեր են :

— Օսման անուն անձ մը առջի օր Ղա-
լաթիա Ետզ-Գարան գիւնդալով և այս
ու այն խանութի մանելով պօսալէ պօս-
ջաբելէ վերջը մէյ մ'ալ յանկարծ երեսին
վրայ գետին ինկեր է : Գանի մը հոգի
անմիջապէս օգնութեան փութացեր են
երթալ վեր վերցնելու համար, սակայն
տեսեր են որ Օսման դիակ մը դարձեր է :

— Առջի գիշեր Հայտար-փաշա հրէի

մը տուն գող մտնելով, 150 սօկայ ար-
ժողութեամբ բան գողցեր են :

— Երկուշաբթի օր յիսուն տարեկան
բեռնակիր մը Սիրքէճի նաւամատոյցին
վրայ կաթուածամահ եղեր է :

— Էքսպրէս կը գրէ թէ Նախարարաց
Ժողովը կիրակի աւուր նստին մէջ ծրա-
խօսի ըէժի ծրագրին քննութիւնը որ
Մեծ եպարգոսին եղբորը մահուան առ-
թիւ ընդհատեր էր, վերստին ձեռք ա-
ռեր է : Դանձուց պաշտօնեան սոյն ծը-
րագրին կազմութիւնը, նպատակը և
գործադրութեան եղանակը ամփոփե-
լով այնպէս ներկայացուցած էր Նախա-
րարաց Ժողովոյ, Ժողովը ծրագրին բոլոր
յօդուածները մի առ մի քննելէ վերջը
մէկ քանին նոյնութեամբ ընդուներ մէկ
քանին ալ բարեփոխեր էր, վերջին նստ-
տին մէջ Ժողովը մնացեալ մասն ալ ամ-
բողջապէս քննեց և դարձեալ մի քանին
նոյնութեամբ ընդուներ մի քանին ալ
բարեփոխեր է : Ըստ այսմ մաղպաթա
մը պատրաստեր է Վեհ. Սուլթանին վա-
ւերացմանը ներկայելու համար : Այս
մաղպաթան Սուլթանին պիտի ներկա-
յացուի, բարեփոխեալ կէտերուն վրայ
ըէժի օրնտիքաի ներկայացուցիչներուն
հաւանութիւնը աւանդէն անմիջապէս
վերջը :

— Դարձեալ էքսպրէս կը գրէ թէ Բ.
Դուաը եւրօպական երկաթուղոյ միա-
ցումը փութացնելու համար վրանիան
իբր միացման կեդրոնավայր ճանչնալ ու-
րոշեր է :

— Աղէքսանդր իշխանը տակէ առաջ
պուլշարական պատուանշաններ հաստա-
տելու առաջարկութիւն ըրած մ'եր, Սոյն
առաջարկութիւնը բացարձակապէս մեր-
ժուեր է : Սակայն հաւանական է որ Ա-
ղէքսանդր իշխանին արտօնութիւն արը-
ուի օսմանեան պատուանշաններ բաշխե-
լու իւր ուղած մարդոց :

— Սառաուլուս փաշայի վիէննայի
և Սախ փաշայի Պերլինի օսմանեան
դեսպան կարգուելու վերաբերեալ իրա-
տէն երկուշաբթի օր Բ. Դուաը զրկուեր
է, Հետեւաբար Սախ փաշա այսօր վա-
ղը իւր պաշտօնատեղին պիտի մեկնի :

— Էֆիմերիս յունական լրագիրը կը
գրէ թէ Բ. Դուաը Երուսաղէմի Պատ-
րիարքական ընտրելեաց ցանկին մէջէն
Բեթղէճէմի, Սքիթուփօլի, Թափարի
և Հրէաստանի առաջնորդաց անունները
օրբեր և անոնց տեղ ուրիշ անուններ
դրեր է :

— Գաթթամանի լրագիրը կը գրէ
թէ կէօք-Ըրմաք անուն գետին վրայ 40
կանգուն երկայնութեամբ մեծ կամուրջ
մը շինուեր լինցեր է :

— Տիգրանակերտի լրագիրը կը պատ-
մէ թէ այս օրերս յիշեալ քաղաքին մէջ
մանուկ մը ծներ է որ կատարելապէս
հրէչ է : Արիկա 40 մատ ունի եղեր ա-
մենքն իրարմէ զատուած, և ծնելու ա-
տեն 32 ակաւով կզակ մը, Առջևի ակ-
աւանները ամենայն դժուարութեամբ հա-
նելու պարտաւորեր են որպէս զի կաթ-
ուանելու ատեն խեղճ մօրը ստինքները չը

խոսնէ : Երեսին վրայ մօրուս և ընչացք ալ ունի եղեր :

— Սթամպուլ կրօն թէ Ձարին թագադրութեան հանդիսին ներկայ գտնուելու համար Բ. Դրան կողմանէ յատուկ պատուիրակ մը զրկելու մասին դեռ ուրջում մը չէ տրուած :

— Սթամպուլ Սերաստացի Սիմօնին հայրենիք երթալու վերաբերեալ լուրը զոր երէկ գրած էինք, հաստատելով կրօն թէ ի նպատակ Սիմօնի հանգանակութիւն բացուեր է Ղալաթիոյ մէջ :

— Իսուսիոյ մէջ եղած վիճակագրութեան մը նայելով կովկասի ընդհանուր բնակչաց թիւը 5,637,000 է եղեր որոյ մէկ միլիոնը Հայ են : Ասոնց 900,000ը կովկասի հաւարային և0 հազարն ալ հիւսիսային կողմն են եղեր :

— Վազըթ կրօն թէ Վեհ, Սուլթանը Բ. Դուսը հրաման զրկեր է որ տէրութեան պաշտօնէից ամսականները անվրթար հասուցանելու համար պէտք եղած միջոցները շուտով ձեռք առնու : Վազըթ կը յաւելու թէ պաշտօնէից արուած հեվալէները այսուհետև Օսմանեան գրամատան պիտի տրուին, որ դաւաւները ամեն տեղեր յատուկ պաշտօնեայներ ունենալով կրնայ դիւրութեամբ գանձել :

— Վազըթ կրօն թէ առնուած վերջին տեղեկութեանց համեմատ Անգղիոս մատչիր է իւր զօրքը Եգիպտոսէն բուս-

րովին քաշել և Եգիպտոսը իւր նախկին տիրոջ վերադարձնել . այս առթիւ Վազըթ Անգղիոյ վաղեմի բարեկամութիւնը կը գրուած է :

— Իսլամի կառավարիչ Սէրէթ էֆ. ի երկրորդ աստիճանի Օսմանիէ

Անուղղակի արօց վարչութեան նախագահ Պ. Օպարէի երկրորդ աստիճանի Մէճիտիէ .

Տ. Նուրիճան էֆ. ի երրորդ աստիճանի Մէճիտիէ .

Գերմանիոյ կայսեր վախճանեալ եղբոր պալատան անուշ Աթուք կոստին առաջին կարգի Մէճիտիէ պատուանշան շնորհուեցան :

— Երէկ մեծ կղզւոյն Յ թիւ շոգենաւին մեքենան Բընալը կղզւոյն առջև խանգարելով, շոգենաւը հոն մտաւ ստիպուեր է . իսկ ճամբորդը կամուրջ գալու համար յաջորդ շոգենաւին ոպասեր են :

— Մեծ Եգիպտոսը հիւանդ ըլլալով երէկ չկրցաւ Բ. Դուսը երթալ :

— Վազըթ ալ կը հաստատէ թէ կիւրակէ աուուր նախարարաց ժողովոյն մէջ ծխախոտի խնդիրը համաձայնութեամբ կարգադրուելով, այս աուուր նախարարաց ժողովոյն մէջ մագաղթան շինուելով Վեհ, Սուլթանին վաւերացմանը պիտի ներկայացուի :

— Մախուսէ ընկերութիւնը պաշտօնապէս կը ծանուցանէ թէ մէկ շաբթուան մէջ երեք հայ ինքզինքնին շոգենաւէն ծովը նետեր սահայն ազատելով ի-

րենց համար հանգանակութիւն եղեր է . յայտնեալ լողալ գիացող և սոսկ ժողովելու համար ինքզինքը ծովը նետող անձանց բնաւ հանգանակութիւն չպիտի ըլլայ շոգենաւին մէջ :

— Մայիս ամսոյ մէջ Եգիպտոսի ընդհանուր պարտուց շահը հասուցանելու համար հարկաւոր գրամն այժմէն պատասա է և 60000 լիրա ևս աւելի կայ :

Ե. ՏԷՄԻՐՃԻՊՍՇԵՍԱՆ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԻՄՍՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԵԱՐԺՈՒՄ Տեար երրորդ

Հաւաքածոյս ամիսն անգամ մը կը հրատարակուի տեար աւ տեար : Տասն երկու տետրին (այսինքն տարեկան) բաժանորդագրինն է Պոլսոյ համար 20 և դաւաւաց համար 25 դահեկան, իսկ օտար երկրաց համար 6 ֆաւանգ : Բաժանորդագրութեան տեղին է մայրաքաղաքիս մէջ Արամեան գրատունն Յակոբեան խան, և Ձմիւռնիոյ մէջ «Արեւելեան Մամլոյ» խմբագրատունն ի կիրիտ խան : Տետր աւ տետր կը վաճառուի Պոլիս ջրավաճառ Պողոս աղայի, Ղալաթիա՝ Վրոյրի և Բերա՝ Ուէյսի քով :

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԱԶԻ

Երսուս հինգ տարիէ ի վեր Փարիզու մէջ ուսմամբ և գործով ապրող Թիւրքահեան Յովհաննէս էֆ. իւր հայրենակցաց կը նուիրէ իւր փորձառու, ժրջան եւ հաւատարիմ միջնորդութիւնն առեւտրական ամեն տեսակ գործողութեանց համար համեա միջնորդագրով . հասցէն է 26 քաիւ տէ պաղիսյոյ (Rue des Batignolles) Փարիզ :

Թանարօն անցած և եկած Աղէքսանդրիոյ առջև բանակած էր երեսուն և վեց հազար հետևակ, եթըը հազար ձիաւոր և բազմաթիւ թնդանօթաձիգ զօրաց հետ որոնք լաւ կազմեալ և հանդերձեալ էին :

Ասաւոտեան ժամը շարսին ալ թիւին վրայ հրացանի կռիւ մը կոկոսէր և վիթթօր զօրապետը իւրաքանչիւրին իւր պատերազմական գիծը կը սահմանէր :

Ժամը հինգին Պօնաբարթ թնդանօթի ձայնէն արթնցաւ :

Երբ աճապարանօք կը հագուէր, Վիթթօրի բանակատեղիէն թիկնապահ մը անոր քով վաղեց ծանուցանելով թէ թշնամին Պօրմիտան անցեր էր և ամբողջ գրծին վրայ պատերազմ կը լար :

Ասալին հիւպատոսը ձին բերել աուաւ, վրան ցտրեց և որընթաց սկսաւ արշաւել այն կողմը ուր պատերազմը տեղի կունենար :

Բլրի մը գաղաթէն երկու բանակաց գիւրքը տեսաւ :

Թշնամին երեք թիւի բաժնուած էր, ձախ թիւը բար հեծեալ և հետևակ թիւը զօրքերէն կը բաղկանար և Սալօի ճամբով Փասթէլ-Չէրեօլօ կերթար . իսկ կեդրոնը և ալ թիւը որուն մէջ էին Հաաիք, Բէմ և Օրէյի զօրապետաց հետևակազօրք և կրննատիէ պահեստի դուռը ընդ հրամանատարութեամբ Օթ զօրապետին, Թօրթօնի ճամբով յառաջ կը խաղային Պօրմիտան վեր ելնելով :

Գետէն անդին առաջին քայլն առնելուն պէս երկու վերջին դուռերը կարտան զօրապետին զօրացը զարնուած էին, որոնք Փէթրա-Պօնա բանակած էին : Ասոնց

— Ահ, այս, Փարիզ մեկնիլ, պատասխանած էր Պօնաբարթ, գրեցէք իրեն որ իտալիա գայ բանակակեդրոնը մեզի հետ միանայ, ուր որ երթանք մէկտեղ գտնուի :

Պարիէն գրած էր և ինչպէս ըսինք, Տըղէ յունիս 12 ին Սթրատէլլա հասած էր :

Ասալին հիւպատոսը կրկնակի խնդութեամբ ընդունած էր զայն . նախ որ անփառասէր մարդ մը, հանճարեղ սպայ մը և անձնուէր բարեկամ մը կը գտնէր, երկրորդ. Տըղէ ճիշդ ժամանակին կը հասնէր Պառթէի յաջորդելու համար իբր հրամանատար որ սպաննուած էր :

Կարտան զօրապետին սխալ տեղեկագրին վրայ առաջին հիւպատոսը կարծած էր թէ թշնամին պատերազմիլ չուզելով ձենովա կը քաշուէր, ուստի Տըղէն և իւր զօրաբաժինը Նովիի ճամբուն վրայ զրկեց յետո նահանջման գիծը կտրելու համար :

13 էն 14 լուսնալու գիշերը շատ խաղաղ անցեր էր : Ասլի իրիկուն կատաղի փոթորկին հակառակ արիւնը աուշտ պատերազմ մ'եղած էր յորում աւատրիացիք յաղթուած էին, կարծես բնութիւնը և մարդիկ յօգնած էին և կը հանգչէին :

Պօնաբարթ հանդարտ էր, միայն մէկ կամուրջ մը կար Պօրմիտայի վրայ և իրեն հաւաստած էին թէ այս կամուրջը կարուած էր :

Պօրմիտայի կողմը յաւալապահ գնդեր գրուած էին կարելի եղածին չափ հեռուն և շրտական հօգիի խուճեր հետազօտութիւն կրնէին անոնց առջևէն :

Թշնամին ամբողջ գիշերը գետէն անցնելով պարապեցաւ :

ԳԱՂՂԻՍՏԻՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԸՍՏ ՕԼԻՆՏՈՐՅԻ

Ա. Մ. Գարագաշեան

Սոն ընտիր սնով քերականութիւնը բաւական ժամանակէ ի վեր սպառած ըլլալով, ազնիւ ժողովրդեան փափաքանացը և խնդրանացը համաձայն հարկ համարուեցաւ որբադրութեամբ կրկին տպագրել:

Կերպանատեղին է Մ. Յ. Փափաղեանի կազմատունը Յակոբեան խան վերի յարկ թիւ 15, և Ուղուն չարշի Քիլիտ խանի կորգ թիւ 370 Գրատուն գաւառական, Մ. Յ. Փափաղեանի վաճառատունը: Գին 15 դահեկան:

ՑՈՒԹ. Մ. ԿՐՃԻԿԵԱՆ

Մասնագէտ Ձղային հիւանդութեանց

Պատիւ ունի ծանուցանել յարգոյ հասարակութեան որ այս անգամ այլեւայլ կողմերէ ի սոն դիմող հիւանդաց դիւրութիւն ըլլալու համար, որոշած է ամեն օր ժամը 9 և 11 Պօլիս կամուրջին դիմաց, Մեծ. Գիւլիսեան եղբարց դեղարանը, Ղղային ամեն տեսակ հիւանդութեանց համար իրեն դիմողները ընդունիլ, և կիրակի օրերը մինչև 4 և 5 օր, ըստ սովորականի իւր տան մէջ կընդունի, Պէշիկթաշ Ենի մահալլէ փոստ ճառագործի Թիւ. 48:

ՃԱՊԱՑՈՑՅՔ ԶՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

Ի ձև հարցման և պատասխանոյ Տպագրութիւն Արամիան
Կը ծախուի բոլոր գրաւաճառաց քով ի գին 5 շրուշ:

ՏԻՐ-ԽՄԲԱԳԻՐ

Մ. Յ. ՄԵԼԻՔԵԱՆ

Իրգա փաղա խան քիւ 14



Փ Ա Ն Ա Ս Է

ԴԵՂ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՒ ԴԵՂ ՍԱՄԱՐԱՑԻՈՅՆ

Կը ծախուի Միստեան և Ընկերաց Ամերիկեան վաճառատունը ի Ղալաթիս Կ. Պօլսոյ փանաթէն իւր օգտակարութեամբ, ինչպէս Ամերիկայի և Եւրոպիոյ, նոյնպէս և Թուրքիոյ այլ և այլ կողմերը մեծ ընդունելութիւն գտած է:

Փանաթէն գեղացւոյն և գաւառացւոյն բժիշկն ու բարեկամն է, և մեծ օրհնութիւն մը համարուած է այն տեղերուն համար, ուր բժիշկ ու դեղ և դարման հազիւ կը գտնուին: Փանաթէն բուսեղէններէ բաղադրեալ լինելով բոլորովին անվնաս է: Փանաթէն այրածին ցաւ կ'առնէ ու քիչ առնի մէջ կը բուժէ. նոյնպէս և մարմնոյն կտրուած ու ճմուլած տեղերուն ցաւն ու բորբոքը շուտով կ'անցնէ:

Ձղային, յօղային և սօկրային սաստիկ ցաւերը բուժելով առաջնապէս կը հանդարտեցնէ: Ստամոքսի, փորի և աղեաց ցաւերը կը կտրէ ու պաղէ յառաջ եկած դժուարութեանց առաջը կ'առնու:

Փանաթէն ակաւայի սաստիկ ցաւերը շուտով կը բուժէ: Մարմնոյն կտրուած կամ վիրաւորեալ կողմերն առաջ փանաթէն քսելով շուտ կը բժշկուին ու կը գոցուին: Փանաթէն կը բժշկէ նաեւ փորհարութիւն, թանջք, հազ, ջերմ, կոկորդի բորբոք և սուսցք, մէջքի ցաւ և այլ դանազան արտեր, որոց սկզբնապատճառը գրեթէ նոյնն են: Այսպէս կը վկայեն շատեր, որք փորձած են: Ընտանիք իրենց տան մէջ ու պանդոխտք և ճանապարհորդք իրենց մօտ փանաթէն պահելով և յանկարծական դժուարութեանց տանն զօրծածելով մեծ օգուտ կը քաղեն և ծանր հեռուանաց առաջը կ'առնուն: Փանաթէն հեղուկ է, որ թէ՛ մարմնոյ վրայէն քսելով և թէ՛ խմելով ալ բժշկութիւն կը գործէ:

Գործածութեան կերպը հետն է: Կլիսաւոր վաճառատեղին է, Ղալաթիոյ Սէնի-ճամիլի գրող Կից Միստեանին Ամերիկեան վաճառատունը, նաեւ մայրաքաղաքի դեղագործաց քով ու գաւառներն ալ կը գտնուին:

Առաւօտեան ժամը երկուքին չորական հոգիի խմբերուն երկուքը թշնամիէն բաձուեցան. եօթը հոգին խղզգրեցան. իսկ ութերորդը փախաւ և եկաւ իմաց տուաւ «ի դէն» պօռալով:

Անմիջապէս ուրհանդակ մը զրկուեցաւ առաջին հիւպատոսին որ Թօր-տի-Կարօֆօրի մէջ պառկեալ էր:

Սակայն զօրապետը բանակը ամբողջ շարժման մէջ գրաւ մինչև որ հիւպատոսին հրամանը հասնի:

Հասնելու համար թէ ընացող բանակը շարժման մէջ դեմուտ առնէ ինչ տպաւորութիւն կը գործէ, անպատճառ պէտքէ տեսարանին ներկայ գտնուիլ. պատերազմական փողը առաւօտեան ժամը երեքին զինուորները զենքի կը հրակիրէր:

Ամենէն քաջերն անգամ այս փողին ձայնէն կը օրոտեին:

Չինուորները հագուած պառկած էին. ամենքն ալ ելան և զենքի վաղեցին:

Մարտնիկ ընդարձակ դաշտին մէջ գիծերը կազմուեցան, փողին ձայնը վառօդի երկար հետքի մը նման կը տարածուէր, և կէս մթութեան մէջ յառաջապահ գնդին վաղելը և շարժիլը կը տեսնուէր:

Երբ առաւօտ եղաւ, մեր զօրքերը հեռուեալ դիրքերը բռնած էին:

Կարտանի և Շամպէրլաքի զօրաբաժինները օրք վերջին յառաջապահ գունդը կը կազմէին, Փէթրա-Պօնի փոքրիկ գիւղին մէջ բանակած էին:

Լան զօրապետին գունդը Սան-ճիլի-լիանօ գիւղին առջևն էր, այն գիւղի զօր երեք ամիս առաջ առաջին հիւպատոսը Բօլանի ցուցած էր քարտէսին վրայ, ըսելով

Թէ յառաջիկայ պատերազմին բաղդը հօն պիտի օրոշուէր:

Հիւպատոսաց անձնապահ գունդը Լան զօրապետին ետևն էր, գրեթէ հօրեւր գրկաչափ հեռի:

Զիւաւորաց կիսաբաժինը ընդ հրամանատարութեամբ Քէլէրման զօրապետի և քանի մը հունգարական հեծեալ և որսորդ գումարտակներ ձախ թեւը կը կազմէին և առաջին գծին վրայ կարտան և Շամպէրլաք զօրաբաժիններուն տնջրպետը կը լեցնէին:

Զիւաւորաց երկրորդ կիսաբաժին մը օրուն կը հրամայէր Շամիօ զօրապետը, ալ թեւը կը կազմէր և երկրորդ գծին վրայ Լան զօրապետին ձիաւորաց անջրպետը կը լեցնէր:

Վերջապէս հեծելոց 12րդ գունդը և որսորդաց 21 րդ գունդը օրք Միւրաթէն անջատած էին և որոց հրամանատարութիւնը Բիվօ զօրապետին արուած էր, ընդհանուր դիրքին վերջին ալ կողմը գտնուած Սալօ անցքը կը գրաւէին:

Այս ամենը քօտն և հինգ կամ քօտն և վեց հազար հոգի կրնային կազմել առանց Մօնիէ և Պօլսէ զօրաբաժինները հաշուելու, իբր տաօը հազար հոգի, որոց ճըղէ կը հրամայէր և որոնք բանակէն զատուած էին ձեռնվախի ճամբուն վրայ թշնամայն յետո նահանջման գիծը կտրելու համար:

Սակայն թշնամին փոխանակ յետո նահանջելու կը յարձակէր:

Եւ յիրաւի 13 ի ցերեկը Աւտորիական բանակին ընդհանուր հրամանատար Մէլա զօրապետը Հատտիք, Քէմ և Օթ զօրավարաց բոլոր գունդերը հաւաքելով